ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՀՈՍԻՑ*
ԱՔՍՈՐԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ Է ՆԱՅԵԼ ՃՆՇՎԱԾՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

BIA լրատվական կենտրոն
21.04.2005

«Ազատություն և փոխօգնություն» կուսակցության (ÖDP) նախագահ՝ Հայրի Քօզանօղլուն 1915թ. հայկական աքսորի 90 ամյակի կապակցությամբ կատարած հայտարարությունում, մեկնաբանելով խնդրի առնչությամբ «Ազատություն և փոխօգնություն» կուսակցության դիրքորոշումը, ասել է.

«Ինչպես պատմության բոլոր հարցերն, այնպես էլ 1915թ. աքսորն հարկավոր է նայել ոչ թե ճնշողների, այլ ճնշվածների աչքերով, աշխարհընկալմամբ:

Հարկավոր է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի մեր հայ քաղաքացիները զգան իրենց լիարժեք քաղաքացիներ, հարկավոր է խուսափել նրանց վիրավորող հայտարարություններից:

Հարկավոր է բացել Հայաստանի սահմանը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամեն տեսակի տնտեսական շրջափակում իրականում բռնություն է այն հարևան երկրի ժողովրդի հանդեպ, որի հետ պետք է զարգանան տնտեսական, սոցիալական և մշակույթային հարաբերություններ: Միջպետական հարաբերություններից բացի հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել երկու ժողովուրդների միջև մարդկային մերձեցման հնարավորություններ ստեղծելուն:

Հարկավոր է վերացնել «Հայկական աքսորի» պատմության վերաբերյալ ազատորեն բանավիճելուն խանգարող սահմանափակումները, հարկավոր է քաջալերել առանց նախապաշարումների բանավիճելու մթնոլորտը»:

Քօզանօղլուն ասել է, որ ներկա փուլում «...հարկավոր է առանց ճնշումների, առանց նախապաշարումների այս հարցի շուրջ կարողանալ խոսել, քաջություն ունենալ անցյալի հետ առերեսվելու համար»:

Ազատ և առանց չարաշահումների մի աշխարհի կերտմանն ուղղված պայքարում կարելի է առաջընթաց արձանագրել այնքանով, ինչքանով ճնշվածներն և աշխատավոր զանգ-

* Տեղեկատվությունը վերցված է ինտերնետի թուրքական կայքերից:

վածները կպայքարեն ամեն տեսակի ճնշման և բռնության դեմ: «Հնարավոր է ապագային ավելի վստահորեն նայել, երբ մենք մեր պատմությունով կառերեսվենք ու կատարված սխալները հանրային հիշողությունում կդատապարտենք»:

Քօզանօղլուն նշել է, որ իրենք չեն ընդունում պատմության ցեղապաշտ-ազգայնական մոտեցումով ձևավորվող այն ջանքերը, որոնք աշխատում են ցույց տալ հայերին իբրև արտաքին ուժերի գործիք և ուշադրություն հրավիրեց այդ խնդրի առնչումը գերմանական իմպերիալիզմին:

«Մարդկանց ամբողջությամբ կոտորվելու, սովի և թշվառության մատնվելու հիմնական պատճառներն էին Իթթիհատ Թերաքքիի կողմից 1913թ. պետության հեղաշրջումով գրավումն ու գերմանական իմպերիալիզմի կողքին տեղ գրավելով երկիրը դեպի պատերազմ առաջնորդելը: Քանզի Սարիղամիշում իրենց զինվորներին աղետի տանողն էլ այս արկածախնդիր պարագլուխներն էին: Հայերին ուղղված աքսորի որոշումն էլ ներքին գործերի նախարարության նախաձեռնությամբ խորհրդարանից, անգամ նախարարների խորհրդից գաղտնի է արվել. պետությունը ոչ մի իրավական և մարդկային հիմք չունենալով հետամուտ է եղել իր քաղաքացիների էթնիկական զտման քաղաքականությանը, եղեռնի ենթարկելով ծերերին, կանանց, երեխաներին»:

Թարգմանությունը՝ ԿԱՅԾԱԿ ՍԱՐՍԱՐՅԱՆԻ